Նոտարական ակտի կոդ: 591-20190328-88-3689139
Նոտարական ակտի գաղտնագիր: STS0FJ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 8
23.07.2009թ. կնքված և սեղանամատյանում թիվ 1657 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Վարդենիս 28.03.2019թ.

Մենք՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքն՝ ի դեմս քաղաքապետ Բ. Հարությունյանի, լիազորված անձ՝Հակոբ Մյասնիկի Սահակյանի, ծնված՝ 15.01.1991 թվականին, անձնագիր՝ AS 0235272, տրված՝ 19.06.2018 թվականին, 043-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի, Գետափնյա 1-ին փողոց, տուն 35 հասցեում, համաձայն 28 մարտի 2019 թվականին տրված լիազորագրի, այսուհետ՝ «ՎԱՐՁԱՏՈՒ» և ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս լիազորված անձ՝ Մայիս Լևոնի Շահինյանը, ծնված 31.08.1985թ. նույնականացման քարտ՝ 005782008, տրված 09.03.2017թ. 040-ի կողմից հաշվառված Գեղարքունիքի մարզ գ. Նորակերտ 1-ին փ., 49 տուն հասցեում, համաձայն 05.03.2019 թվականին տրված թիվ 1/18-2/2102-2019 լիազորագրի, այսուհետ՝ «ՎԱՐՁԱԿԱԼ», մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 23.07.2009թ. կնքված և սեղանամատյանում թիվ 1657 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը /այսուհետը Պայմանագիր/ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին՝

1.1. Հաստատել 2019թ. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
1.2. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2019թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1. Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:
2.2. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս /4/ հավասարազոր օրինակներից: Համաձայնագրի մեկ օրինակը պահվում է նոտարի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:
2.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
2.4. Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ՎԱՐՁԱՏՈՒ» ՀՀ Գեղարքունիքի մարզ ք. Մարտունի, Հասցե՝ ք. Մարտունի, Շահումյան 2 ՀՎՀՀ 08203584, Հ/Հ 900145101185, Մարտունու քաղաքապետ՝ Բ. Հարությունյան
Լիազորված անձ Հ.Սահակյան

«ՎԱՐՁԱԿԱԼ» ՀՀ պետական եկամուտների կոմիտե ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7 ՀՎՀՀ 02647057 Հ/Հ 900013574018 Կենտրոնական գանձապետարան Գործառնական վարչության.

Լիազորված անձ՝ ստորագրություն Մ. Շահինյան

Երկու հազար տասնինը թվականի մարտի քսանութին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ Գեղարքունիքի մարզ նոտարական տարածքի նոտար՝ Տիգրան Ֆելիքսի Սարգսյանի կողմից: Համաձայնագիրը ստորագրված է իմ ներկայությամբ: Համաձայնագիրըը ստորագրողների ինքնությունը պարզված է, գործունակությունը, ինչպես նաև լիազորությունները ստուգված:

Գրանցված է գրանցամատյանում N 672 ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Տիգրան Ֆելիքսի Սարգսյան

Հավելված 1
23.07.2009թ. կնքված և սեղանամատյանում թիվ 1657 համարով
գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի
թիվ 8 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային միջոցների հաշվին					
	Ծառայության անվանումը	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Ընդամենը՝ Տարի
1.	ք. Մարտունի, Շահումյան 2 հասցեում գտնվող վարչական շենքի վարձակալություն	125,580	167,440	209,300	251,160	282,220	282,220

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամորտիզացիոն կարգով*

«ՎԱՐՁԱՏՈՒ»

ՀՀ Գեղարքունիքի մարզ ք. Մարտունի

Հասցե՝ ք. Մարտունի, Շահումյան 2
ՀՎՀՀ 08203584
Հ/Հ 900145101185

Մարտունու քաղաքապետի՝
Լիազորված անձ՝

_____ Հ. Սահակյան
(ստորագրություն)

«ՎԱՐՁԱԿԱԼ»

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013574018
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն

Լիազորված անձ՝

---------- Մ. Շահինյան
(ստորագրություն)